

## Տիրուհին

### ՆԵՐՄԵՍ ՊԱԼԻՇԵԱՆ

Ս. Յակոբեանց Միարանութեան անդամ Հոգշ. Տ. Ազան Արեգայ Պալիօգեան դժբախտութիւնը ունեցաւ կորսեցնելու իր հայրը՝ հանգուցեալ ներսէ Պալիօգեան, Շաքար, 14 Դեկտեմբեր 1968-ին, Հալեպի մէջ։ Ան զահն էր սրբի կարուածի մը։

Հանգուցեալ ներսէ Պալիօգեան ծնած էր 1911-ին Այնքապ եւ խորապէս ևաւատացեալ ու ընտանիքի պարկեշտ հայր մըն էր, որ իր ետին կը ճգէ անմիքար այրի մը եւ գաւակներ։

«Սիսն», յանուն Ս. Յակոբեանց Միարանութեան, վշտազգած ցաւակցութիւններ կը յայտնէ Հոգշ. Տ. Ազան Արեգային եւ Պալիօգեան ընտանիքին, հայցելով Ամենակալին միխրառութիւնը եւ համիգիստ՝ հանգուցեալի հոգիին։

### ՏՔԹ. ՎԱՐԱՆ ԳԱԼՈՊԵԱՆ

Երուսապէմի Հայ գագութը դժբախտութիւնը ունեցաւ կորսեցնելու իր երէց եւ բազմարդիւն անդամներէն մին՝ յանձնին ողբացեալ ՏՔԹ. Վահան Գալպեանի, որ ի Տէր հանգեան Կիրակի, 2 Փետրուար 1969-ին, յետ երկարաւուն հիւանդառութեան։

Թաղման տիսուր արարողութիւննը կատարուեցաւ Զորեշշաբքի, 5 Փետրուար 1969-ի յետ միջօրէին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, ի ներկայութեան Հայ քէ օտար սգակիրներու խուռն բազմութեան մը։ Արարողութեան նախապահեց եւ հանգուցեալին արժանիքներն ու կատարած ազգային ծառայութիւնները վեր հանող յարգի դամբանական մը խօսեցաւ Ամենապատիր Պատրիարք Ս. Հայրը։ Ցես արարողութեան, բաղմանական թափօրթ, գլխաւորութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսի, յառաջացաւ դէախ Ս. Փրկչի Ազգային Գերեզմանաստուն, ուր, ողբացեալին դադաղին առջեւ դամբանականներ խօսեցան ՏՔԹ. Մահմուտ Տաժանի՛ Բժիշկ-ներու Միարեան կողմէն եւ Պրն. Կարապետ Յակոբեան՝ Երաւսաղէմացի Հայոց Բարեսիրաց Միարեան կողմէ։

«Սիսն», յանուն Երաւսաղէմի Հայ Պատրիարքութեան եւ Ս. Յակոբեանց Միարանութեան, իր ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի այրիին և Պալպեան գերդաստամի անդամներուն, ազօրելով որ Տէրը արժանի հանգիստի եւ խաղաղութեան արժանացնէ ողբացեալ ՏՔԹ. Գալպեանի հոգին։